

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ 100 ԼԱԽԱԳՈՅՆ ԳԻՐՔԵՐՈՒ

Մեր անցեալ շարժումն խոստման համեմատ կու գանք հաղորդել ելքը Հայերէն լաւագոյն գիրքերու հարիւրեակը կազմելու աշխատութեան, որ նոր վերջացաւ : Կը յիշուի թէ մեր փափաքն էր իմանալ թէ ինչ գիրքեր կարդալու է մէկը, որպէս զի քաջ տեղեկանայ Հայկական գրականութեան և ճշմարիտ գաղափար մը ստանայ Հայկական ազգային կեանքին և զայն վառող ոգիին ու կազմակերպող ոյժերուն վրայ :

Նախ պարտիմք շնորհակալութիւն յայտնել այն բարեկամներուն որ ժամանակ և ուշադրութիւն տուին այս խնդրին և աշխատեցան օգնել որ մենք մեր նպատակին հասնինք : Ի սրտէ շնորհակալ ենք ոչ միայն այն բարեկամներէն որոնք զբացանկեր ղրկեցին, այլ և ամէն անոնցմէ որ նամակներով իրենց շահագրգռումն յայտնեցին այս ձեռնարկին համար և կարեւոր թելադրութիւններ հաղորդեցին նկատմամբ սկզբունքներուն որոնց հարկ է միտ զնել, թէպէտ ծանր զբաղումներու պատճառով իրենք ժամանակ չունեցան զբացանկ պատրաստելու : Այդ նամակները, որոնցմէ ոմանք Հայ գրական աշխարհի մէջ նշանաւոր գիրք զբաւոյններու կողմէ են, մեզ սա համոզման կ'առաջնորդեն թէ Հայերէն լաւագոյն գիրքերու ցանկ մը պատրաստելու ձեռնարկը աւելի իսկ կարեւոր ու բաղձալի է քան զոր կը կարծէինք երբ աստջին անգամ ասաջարկը հրատարակեցինք :

Անկեղծօրէն կ'ըսենք թէ չէինք ակնկալեր զիւրաւ ու շուտով ձեռք բերել ընդհանուր հաճութեան ու հաւանութեան արժանացող ցանկ մը : Հարկ է որ խնդրը ուրիշ թերթեր եւս ձեռք առնեն և բազմաթիւ ցանկեր պատրաստուին տարբեր տեսակէտներով, և շատ յապաւումներէ և յաւելումներէ ետեւ վերջապէս ձեռք բերուի մերձաւորագէտ ընդհանուր համաձայնութիւն մը : Ինչպէս կանխաւ ցոյց տուինք, այսպիսի ցանկ մը զլիւստորագէտ պիտի նպաստէ Հայ և օտար ուսանողներուն որ Հայերէն գրականութիւնը կ'ուսուցնասիրեն լրջօրէն, նաեւ անհատական գրատուններու կազմութեան : Տարակոյս չկայ թէ միեւնոյն գիրքերու ընթերցումը ժողովուրդներու միացման և անոնց ազգային մտաւիպարներուն ձեւակերպման սատարող ամենազօրեղ ազդեցութիւններէն մին է :

Հաւանօրէն աւելի լաւ պիտի ըլլար, ինչպէս թելադրեցին թղթակիցներէ ոմանք, ի սկզբան հա-

րիւրէ պակաս թուով ցանկ մը պահանջել : Թեքեւս մէկ տասնեակը ամենալաւ սկզբնաւորութիւն պիտի ըլլար : Ապա կրնար այդ տակաւ բարձրացուիլ հնգեասնեակի, քսանեակի, քսանհինգեակի և թերեւս յիսնեակի : Այս մեր փորձառութիւնն կատարելով, և Հայկական գրականութիւնը ծաւալկողմէ մեծագոյն ազգերու գրականութեան հետ բաղդատելով, կու գանք սա համոզման թէ յիսնեակը աւելի լաւ ու բանաւոր նպատակակէտ պիտի ըլլար քան հարիւրեակը :

Կ'ընդունինք թէ այս խնդրին շատ ժամանակ պէտք է տալ զոնացուցիչ եզրակացութիւն մը ձեռք բերելու համար : Վերջին այս քանի մը ամիսները քաղաքական իրենց խոտովեալ ու խոտվիչ պայմաններով բնաւ տրիպար պատեհութիւն մը չընծայեցին ոեւէ տեսակ գրականութիւն ուսուցնասիրելու համար անվրդով ու ուշադրութեամբ : Կը յուսանք որ այս խնդրը վերստին ի նկատ կ'առնուի երբ աւելի խաղաղ ժամանակներ վերադառնան :

Ինչպէս ծանուցուեցաւ նախապէս, մեզի զբուրուած գրացանկերը քննելու համար որոշուած մեթոտն է անոնցմով նոր ցանկ մը պատրաստել միւսներուն մէջ առաւելագոյն քուէ ստացած գիրքեր պարունակող, և մրցանակը տալ այն գրացանկին որ ամէնէն աւելի կը մօտենայ այդ նորին : Տես Աւետիսեանի Յուլ. 6, էջ 629 : Այդ մեթոտը կիրարկուեցաւ ամենամեծ ուշադրութեամբ և Մուշի Գերման դպրոցի ուսուցիչներէն Տիար Արսէն Կ. Սարենցի գրացանկը առաջին հանդիսացաւ ու ոսկին անոր կը տրուի : Կ'ուզենք ջերմագէտ յիշատակել Արմաշու Տ. Մեսրոպ Վրդ. Նարոյեանի, Խարբերդու Տ. Վահան քննչ. Արսլանեանի և Մարտունի Տիար Արշակ Կ. Թիւթիւնճեանի գրացանկերը, որոնց իւրաքանչիւրը մասնաւոր արժանիք ունի : Ուրախ պիտի ըլլանք եթէ յապտղած գրացանկեր ալ հասնին : Զանոնք եւս ի նկատ պիտառնենք ամենայն յօժարութեամբ :

Ստորեւ կը հրատարակենք Արսէն Կ. Սարենցի գրացանկը :

Յ Ո Ւ Յ Ա Կ

ՀԱՅԵՐԷՆ 100 ԼԱԽԱԳՈՅՆ ԳԻՐՔԵՐՈՒ

1. Աստուածաշունչ
2. Ազատութեան շանապարհին, Ա. Ահարոնեան
3. Ազգային Զօջեր, Յ. Պարոնեան
4. Ալիշանի Կենսագրութիւնը, Մ. Երեմեան
5. Ալմաստ, Ատրպետ
6. Աղբար Թովմասի Տնակը

- 7. Ամիա մը ի կիլիկիա, Ա. Թէոդիկ
- 8. Անգլիական Նամականի, Մ. Մամուրեան
- 9. Ապացոյցք Քրիստոնէութեան [եան
- 10. Առողջարանութիւն Աստանին, Տր. Տաղաւար-
- 11. Աստուածային Կատակերգութիւն, Տանդէ
- 12. Արաքսիա, Ս. Տիւսար
- 13. Արարատ, Ղ. Ալիշան
- 14. Արհաւիրք Կիլիկիոյ, Ս. Պարթեւեան
- 15. Արեւել. Խնդիրը, Փրոֆ. Թոմասեան
- 16. Անգիր Գպրութիւն, Վ. Վրդ. Տ. Մինասեան
- 17. Բանտէ բանտ, Ս. Բիւրատ [եան
- 18. Բնաշրջականի մը Ներշնչումները, Մ. Մինաս-
- 19. Գարեգին Սրուանձտեանց, Մ. Աղաբէկեան
- 20. Գուբան, Վեր. Ա. Ամիրխանեան
- 21. Գրիգոր Արծրունի, Լէօ [բութիւն
- 22. Գրիգոր Օտեանի Գրչի Գոհարներ և Կենսագ-
- 23. Դաստիարակի մը Խօսքեր, Ռ. Պէրպէրեան
- 24. Դաւիթ Պէկ, Ռաֆֆի
- 25. Դրախտ Կորուսեալ, Միտան
- 26. Դրախտի Ընտանիք, Խ. Հայրիկ
- 27. Եղիշէի Վարդանանց Պատերազմը
- 28. Եղնիկ, Եղծ Աղանդոց
- 29. Երլաբգէ Սասուն, Ս. Բիւրատ
- 30. Ենիական Վիրգիլեայ
- 31. Երկունք, Մերենց
- 32. Զէյթունի Անցեալէն ու Ներկայէն, Զէյթունցի
- 33. Ընտանիքի Վերլուծումներ, Յ. Պուճիգանեան
- 34. Թափառական Հրեայ
- 35. Թէոգորոս Ռչտունի, Մերենց
- 36. Թշուառներ
- 37. Թորոս Լեւոնի, Մերենց
- 38. Թորոս Աղար, Գ. Սրուանձտեանց
- 39. Իվանոյէ, Վալթըր Աքաթ
- 40. Իլիական Հոմերոսի
- 41. Լեւոն Լուսինեան և, Պամաճեան
- 42. Խաչի Ճատ, Խ. Հայրիկ
- 43. Խենթը, Ռաֆֆի
- 44. Խոհք և Յուշք, Ռ. Պէրպէրեան
- 45. Խորհուրդք Հաւատացելոյ, Յ. Մաթթէնեան
- 46. Կայծեր, Ռաֆֆի
- 47. Կատակերգք Մոյիէրի, Մ. Նուպարեան
- 48. Կեանքի Գործածութիւնը
- 49. Կիլիկիա, Վ. Քիւրքճեան [նասեան
- 50. Կրթական Աղգարուքներ և Իտէլաներ, Մ. Մի-
- 51. Կրօններու Պատմութիւններ, Բէյրի
- 52. Հազարուճէկ Գիշերներ
- 53. Համլէթ, Շէյքսպիր
- 54. Հայապատում, Ղ. Ալիշան
- 55. Հայկ. Ճգնաժամը, Տր. Գարրիէլեան

- 56. Հայկ. Տգազրութիւնը, Լէօ
- 57. Հայ Կայսերք Բիւզանդիոնի
- 58. Հայկ Դիւցազն, Հ. Արսէն Բագրատունի
- 59. Հայոց Եկեղեցին և իր Պատմ., Մ. Օրմանեան
- 60. Հին Հաւատք Հայոց, Ղ. Ալիշան
- 61. Կինն Իբրեւ Օրիորդ, Նազիկեան
- 62. Ճամբորդութիւն Քրիստիանոսի
- 63. Մատենագրութիւն Մովսէսի Խորենացւոյ
- 64. Մարդ Ըլլալու Միջոցը, Ա. Կ. Սէքլէճեան
- 65. Մուրացանի Երկասիրութիւնները
- 66. Մտածութիւն Տօնական Օրերու, Պետիկեան
- 67. Մտաւոր Փրիստիպարութիւն
- 68. Յուշիկք Հայրենեաց, Ղ. Ալիշանի
- 69. Ն. Բուջակի Դիւանը, Ա. Զօպանեան
- 70. Նուպար Փաշա, Մ. Նուպարեան
- 71. Նժանութիւն Քրիստոսի, Թովմաս Գէճարացի
- 72. Նարեկ
- 73. Ներածութիւն
- 74. Պատմ. բարեկարգութեան, [անալեան
- 75. » Հայ Հին ու Նոր դպրութեանց, Զարփ-
- 76. » Ռուսահայ Գրականութեան, Լէօ
- 77. » Բաղաքակրթութեան, Մ. Նուպարեան
- 78. » Հայոց, Պալասանեան [րատեան
- 79. » Հայ Եկեղեցւոյ, Մեղիսեղեկ Մու-
- 80. » Ընդհ. Ազգաց, Մ. Մամուրեան
- 81. Պարզ Կեանքը, Շ. Վահնէր
- 82. Պէպօ, Գ. Սանդուկեանց
- 83. Ռոպենոնի Պատմութիւնը
- 84. Սամուէլ, Ռաֆֆի
- 85. Սաւերք Հայկական, Նոր-Պէյ
- 86. Սրբոց Հանգիստ
- 87. Սիսաւան, Ղ. Ալիշան
- 88. Վէրք Հայաստանի, Խ. Արովեան
- 89. Վտանգը, Վեր. Գնտճեան
- 90. Տելեմազ
- 91. Փոքնջ Մանկավարժ. Դասախօս, Հինդլեան
- 92. Քրիստոնէութեան Գաղափարականը
- 93. Քերթուածներ Արշակ Զօպանեանի
- 94. » Պ. Աղամեանի
- 95. » Պ. Դուրեանի
- 96. Քայլեր Դէպ ի Քրիստոս. Է. Կ. Հուայթ
- 97. Քօստ, Շիրվանշատէ
- 98. Քննական Պատմ. Հայոց, Գարազաշեան
- 99. Օսրան, Հ. Ա. Ղազիկեան
- 100. Յառուստ, Կէօթէ

